



Legislation update

Summary of selected documents published for the period from 1 October 2016 to 31 December 2016

Tax

Issue 5, 2016

A Bibliography of New Legislation, Instructions and Documents, with Commentary

ՀԱՐԿԵՐ ԵՎ ԱՅԼ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ

- 1. Անվանումը** «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին
- Փաստաթուղթ. ՀՀ օրենք
 Ամսաթիվը. 17 հոկտեմբերի 2016թ.
 Համարը. ՀՕ-146-Ն
 Հրատարակում. ՊՏ No. 77, 26 հոկտեմբերի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիրը.

Օրենքի այս փոփոխությամբ սահմանվել է, որ մաքսավճարից ազատվում են մեկ փոխադրողից մեկ ստացողին մեկ տրանսպորտային փաստաթղթով ՀՀ սահմանով տեղափոխվող, ընդհանուր մաքսային արժեքը 200 եվրոյին համարժեք գումարը չգերազանցող գումարի չափով ապրանքները:

- 2. Անվանումը** «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

- Փաստաթուղթ. ՀՀ օրենք
 Ամսաթիվը. 18 հոկտեմբերի 2016թ.
 Համարը. ՀՕ-153-Ն
 Հրատարակում. ՊՏ No. 77, 26 հոկտեմբերի 2016թ.
 Ուժի մեջ է. 2017թ. հունվարի 1-ից

Համառոտ նկարագիրը.

Օրենքի այս փոփոխությամբ սահմանվել է գործունեության տեսակների հետ կապված հայտարարության, դիմումի, տեղեկությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման հնարավորություն:

Միաժամանակ, սահմանվել է, որ բացառապես հաստատագրված վճարներով հարկվող գործունեություն իրականացնելու և այլ տեսակի հարկվող օբյեկտ չունենալու դեպքում շահութահարկի հաշվարկ չի ներկայացվում:

TAXES AND OTHER MANDATORY PAYMENTS

- 1. Title** On making supplements and amendment to the RA Law “On Customs Regulation”
- Document: RA law
 Date: 17 October 2016
 Number: HO-146-N
 Publication: OJ No. 77, 26 October 2016
 Effective: From the 10th day following the official publication

Abstract:

In accordance with this amendment to the law, goods in the amount not exceeding the equivalent of the total customs value of Euro 200 that cross the RA border and are transported by one carrier to one recipient under one transport document are exempt from customs fee.

- 2. Title** On making amendments and supplements to the RA Law “On Presumptive Payments”

- Document: RA law
 Date: 18 October 2016
 Number: HO-153-N
 Publication: OJ No. 77, 26 October 2016
 Effective: From 1 January 2017

Abstract:

This amendment to the law provides for possibility of submitting the declaration, application, information with respect to the types of activities in electronic form.

At the same time, it has been established that profit tax report shall not be submitted in case of carrying activities taxed exclusively by presumptive payments and absence of any other taxable object.

Հաստատագրված վճարի վճարման ժամկետ սահմանվել է հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Հիշեցնենք, որ ներկայումս հաստատագրված վճարի վճարման ժամկետ սահմանված է հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-ը ներառյալ:

The deadline for payment of presumptive payment was established the 20th (inclusive) of the month following the reporting period.

It should be reminded that currently presumptive payment is paid by the 15th (inclusive) of the month following the reporting period

3. Անվանումը **ՀՀ կառավարության 2016թ. փետրվարի 18-ի No:141-Ն և 2016թ. ապրիլի 28-ի No:415-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին**

Փաստաթուղթ. ՀՀ կառավարության որոշում
 Ամսաթիվը. 13 հոկտեմբերի 2016թ.
 Համարը. 1045-Ն
 Հրապարակում. ՊՏ No. 77, 26 հոկտեմբերի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիրը.

Այս փոփոխությամբ հանվել է ՀԴՄ կտրոնի վրա ԱԴԳՏ դասակարգչով սահմանված ապրանքի և ծառայության դասերը լրացնելու պահանջը:

3. Title **On making amendments to the RA government decrees No:141-N dated 18 February 2016 and No:415-N dated 28 April 2016**

Document: RA government decree
 Date: 13 October 2016
 Number: 1045-N
 Publication: OJ No. 77, 26 October 2016
 Effective: From the 10th day following the official publication

Abstract:

By this amendment the requirement to complete in cash register receipts the classes of goods and services as defined by CPA classifier has been withdrawn.

4. Անվանումը **«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին**

Փաստաթուղթ. ՀՀ օրենք
 Ամսաթիվը. 1 նոյեմբերի 2016թ.
 Համարը. ՀՕ-162-Ն
 Հրապարակում. ՊՏ No. 80, 4 նոյեմբերի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվանից 6 ամիս հետո

Համառոտ նկարագիրը.

Օրենքի այս լրացմամբ սահմանվել է որ ընդերքօգտագործման թափոնների վերամշակողները ևս հանդիսանում են ռոյալթի վճարողներ:

4. Title **On making supplements to the RA Law on Nature Protection and Nature Utilization Payments**

Document: RA law
 Date: 1 November 2016
 Number: HO-162-N
 Publication: OJ No. 80, 4 November 2016
 Effective: After 6 months following the official publication

Abstract:

In accordance with this supplement to the law, processors of mining wastes shall be also treated as royalty payers.

Միաժամանակ, համապատասխան փոփոխություններ են կատարվել նաև «ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում», մասնավորապես, սահմանվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների գծով օրենսդրական կարգավորումներ:

At the same time, relevant amendments have been made to the RA Code on Mining, particularly, legislative regulations have been established with respect to the management of mining wastes and processing plans of mining wastes.

5. Անվանումը **«Հայաստանի Հանրապետության կառավարության և Սերբիայի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու մասին» կոնվենցիան վավերացնելու մասին**

Փաստաթուղթ. ԱԺ որոշում
 Ամսաթիվը. 26 հոկտեմբերի 2016թ.
 Համարը. ԱԺՈ-247-Ն
 Հրապարակում. ՊՏ No. 81, 9 նոյեմբերի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիրը.

ՀՀ Ազգային ժողովի այս որոշմամբ վավերացվել է «ՀՀ կառավարության և Սերբիայի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու» կոնվենցիան:

5. Title **On ratification of the convention “On avoidance of double taxation of income and property between the government of the Republic of Armenia and the government of the Republic of Serbia”**

Document: NA decision
 Date: 26 October 2016
 Number: NAD-247-N
 Publication: OJ No. 81, 9 November 2016
 Effective: From the 10th day following the official publication

Abstract:

By this decision of the National Assembly the convention “On avoidance of double taxation of income and property between the government of the Republic of Armenia and the government of the Republic of Serbia” has been ratified.

Կոնվենցիան գործում է 2017թ. հունվարի 1-ից:

The convention is effective from 1 January 2017.

6. Անվանումը «Հայաստանի Հանրապետության և Սլովակիայի Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին

6. Title On ratification of the agreement “On avoidance of double taxation of income and property and prevention of tax evasion between the Republic of Armenia and the Republic of Slovakia”

Փաստաթուղթ. ԱԺ որոշում
 Ամսաթիվը. 26 հոկտեմբերի 2016թ.
 Համարը. ԱԺՈ-248-Ն
 Հրապարակում. ՊՏ No. 81, 9 նոյեմբերի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Document: NA decision
 Date: 26 October 2016
 Number: NAD-248-N
 Publication: OJ No. 81, 9 November 2016
 Effective: From the 10th day following the official publication

Համառոտ նկարագիրը.

Abstract:

ՀՀ Ազգային ժողովի այս որոշմամբ վավերացվել է «ՀՀ և Սլովակիայի Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիրը:

By this decision of the National Assembly the agreement “On avoidance of double taxation of income and property and prevention of tax evasion between the Republic of Armenia and the Republic of Slovakia” has been ratified.

Համաձայնագիրը դեռևս չի գործում: Նախատեսվում է, որ համաձայնագիրը գործողության մեջ կմտնի 2018թ. հունվարի 1-ից:

The agreement is not effective yet. It is expected that the agreement will come into force from 1 January 2018.

7. Անվանումը «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև 2000թ. հուլիսի 19-ի՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ» համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» արձանագրությունը վավերացնելու մասին

7. Title On ratification of the protocol on making amendments and supplements to the agreement “On avoidance of double taxation of income and property and prevention of tax evasion between the government of the Republic of Armenia and the government of the Republic of Belarus” signed between the government of the Republic of Armenia and the government of the Republic of Belarus on 19 July 2000

Փաստաթուղթ. ԱԺ որոշում
 Ամսաթիվը. 13 դեկտեմբերի 2016
 Համարը. ԱԺՈ-261-Ն
 Հրապարակում. ՊՏ No. 92, 22 դեկտեմբերի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Document: NA decision
 Date: 13 December 2016
 Number: NAD-261-N
 Publication: OJ No. 92, 22 December 2016
 Effective: From the 10th day following the official publication

Համառոտ նկարագիրը.

Abstract:

ՀՀ Ազգային ժողովի այս որոշմամբ վավերացվել է «ՀՀ կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև 2000թ. հուլիսի 19-ի՝ «ՀՀ կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու վերաբերյալ» համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» արձանագրությունը:

By this decision of the National Assembly the protocol on making amendments and supplements to the agreement “On avoidance of double taxation of income and property and prevention of tax evasion between the government of the Republic of Armenia and the government of Republic of Belarus” signed between the government of the Republic of Armenia and the government of the Republic of Belarus on 19 July 2000 has been ratified.

Արձանագրությամբ մի շարք փոփոխություններ են կատարվել համաձայնագրում: Մասնավորապես՝

A number of amendments have been made to the agreement in accordance with the protocol. Particularly:

- փոփոխվել են որոշ սահմանումներ,
- կատարվել են շահաբաժնի, տոկոսի, ռոյալթիի մասով փոփոխություններ:

- certain definitions have been amended;
- amendments related to dividends, interests, royalties have been made.

Արձանագրությամբ կատարված փոփոխությունները գործում են 2017թ. հունվարի 1-ից:

Amendments made by the protocol are effective from 1 January 2017.

8. Անվանումը «Հայաստանի Հանրապետության կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայում փոփոխություն կատարելու մասին

Փաստաթուղթ. ԱԺ որոշում
 Ամսաթիվը. 13 դեկտեմբերի 2016թ.
 Համարը. ԱԺՈ-262-Ն
 Հրապարակում. ՊՏ No. 92, 22 դեկտեմբերի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիրը.

ՀՀ Ազգային ժողովի այս որոշմամբ վավերացվել է «ՀՀ կառավարության և Հնդկաստանի Հանրապետության կառավարության միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիայում փոփոխություն կատարելու մասին» արձանագրությունը: *Արձանագրությամբ կատարված փոփոխությունները դեռևս գործողության մեջ չեն մտել:*

9. Անվանումը «Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին

Փաստաթուղթ. ԱԺ որոշում
 Ամսաթիվը. 13 դեկտեմբերի 2016թ.
 Համարը. ԱԺՈ-263-Ն
 Հրապարակում. ՊՏ No. 92, 22 դեկտեմբերի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիրը.

ՀՀ Ազգային ժողովի այս որոշմամբ վավերացվել է «ՀՀ և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիրը: *Նոր Համաձայնագիրը դեռևս չի գործում:*

10. Անվանումը «Հայաստանի Հանրապետության կառավարության և Շվեդիայի Թագավորության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիան վավերացնելու մասին

Փաստաթուղթ. ԱԺ որոշում
 Ամսաթիվը. 13 դեկտեմբերի 2016թ.
 Համարը. ԱԺՈ-264-Ն
 Հրապարակում. ՊՏ No. 92, 22 դեկտեմբերի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիրը.

ՀՀ Ազգային ժողովի այս որոշմամբ վավերացվել է «ՀՀ կառավարության և Շվեդիայի Թագավորության կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» կոնվենցիան: *Կոնվենցիան դեռևս չի գործում:*

8. Title On making an amendment to the convention “On avoidance of double taxation of income and property and prevention of tax evasion between the government of the Republic of Armenia and the government of the Republic of India”

Document: NA decision
 Date: 13 December 2016
 Number: NAD-262-N
 Publication: OJ No. 92, 22 December 2016
 Effective: From the 10th day following the official publication

Abstract:

By this decision of the National Assembly the protocol on making an amendment to the convention “On avoidance of double taxation of income and property and prevention of tax evasion between the government of the Republic of Armenia and government of the Republic of India” has been ratified.

Amendments made by the protocol are not effective yet.

9. Title On ratification of the agreement “On avoidance of double taxation of income and property and prevention of tax evasion between the Republic of Armenia and Federal Republic of Germany”

Document: NA decision
 Date: 13 December 2016
 Number: NAD-263-N
 Publication: OJ No. 92, 22 December 2016
 Effective: From the 10th day following the official publication

Abstract:

By this decision of the National Assembly the agreement “On avoidance of double taxation of income and property and prevention of tax evasion between the Republic of Armenia and Federal Republic of Germany” has been ratified.

New agreement is not effective yet.

10. Title On ratification of the convention “On avoidance of double taxation of income and property and prevention of tax evasion between the government of the Republic of Armenia and the government of the Kingdom of Sweden”

Document: NA decision
 Date: 13 December 2016
 Number: NAD-264-N
 Publication: OJ No. 92, 22 December 2016
 Effective: From the 10th day following the official publication

Abstract:

By this decision of the National Assembly the convention “On avoidance of double taxation of income and property and prevention of tax evasion between the government of the Republic of Armenia and the government of the Kingdom of Sweden” has been ratified.

The convention is not effective yet.

11. Անվանումը **ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 12-ի No:1403-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Փաստաթուղթ ՀՀ կառավարության որոշում
 Ամսաթիվը. 22 դեկտեմբերի 2016թ.
 Համարը. 1347-Ն
 Հրապարակում. ՊՏ No. 94, 29 դեկտեմբերի 2016թ.
 Ուժի մեջ է. 2017թ. հունվարի 1-ից

Համառոտ նկարագիրը.

ՀՀ կառավարության այս որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2013թ. դեկտեմբերի 12-ի «Օտարերկրյա քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում ձեռք բերված ապրանքների արտահանման ժամանակ ավելացված արժեքի հարկի գումարների վերադարձման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 1998թ. հունիսի 17-ի No:372 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» No:1403-Ն որոշման մեջ:

Մասնավորապես, այս որոշմամբ ավելացված արժեքի հարկ վճարողներից ձեռք բերված ապրանքների համար օտարերկրյա անձանց կողմից ՀՀ տարածքում վճարված ավելացված արժեքի հարկի գումարները հետ ստանալու համար ԱԱՀ վերադարձի հաշվով ձեռք բերված ապրանքների արժեքի (ներառյալ ավելացված արժեքի հարկը) շեմը սահմանվել է 50,000 դրամ՝ ներկայիս 100,000 դրամի փոխարեն:

12. Անվանումը **ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին**

Փաստաթուղթ ՀՀ օրենք
 Ամսաթիվը. 30 դեկտեմբերի 2016թ.
 Համարը. ՀՕ-245-Ն
 Հրապարակում. ՊՏ No. 95, 30 դեկտեմբերի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիրը.

ՀՀ այս օրենքով ներդրվել է ՀՀ պաշտպանության, մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովող հատուկ համակարգ, ինչպես նաև սահմանվել է դրոշմանիշային վճար, որը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով նույն օրենքով սահմանված կարգով և չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է:

Դրոշմանիշային վճարների մասով մասնավորապես սահմանվել է, որ

- դրոշմանիշային վճար պարտավոր են վճարել՝
 - աշխատանքային պայմանագրով ՀՀ տարածքում կամ ՀՀ տարածքից դուրս աշխատող ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձինք,
 - աշխատանքային պայմանագրով ՀՀ տարածքում աշխատող ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական անձինք,

11. Title **On making amendments and supplements to the RA government decree No:1403-N dated 12 December 2013**

Document: RA government decree
 Date: 22 December 2016
 Number: 1347-N
 Publication: OJ No. 94, 29 December 2016
 Effective: From 1 January 2017

Abstract:

In accordance with this RA government decree an amendment has been made to the RA government decree No:1403-N of 12 December 2013 “On approval of a procedure on refund of VAT amounts when exporting goods purchased by foreign citizens on the territory of the Republic of Armenia and on repealing the RA government decree No: 372 of 17 June 1998”.

Particularly, according to this decree, for the refund of VAT amounts paid by foreign citizens on the territory of the Republic of Armenia for the goods purchased from VAT payers, the limit of AMD 50,000 instead of currently applicable AMD 100,000 has been established for the value (including VAT) of goods purchased by VAT refund invoice.

12. Title **On compensation for fallen or damaged servicemen during the defense of the Republic of Armenia**

Document: RA law
 Date: 30 December 2016
 Number: HO-245-N
 Publication: OJ No. 95, 30 December 2016
 Effective: From the 10th day following the official publication

Abstract:

This RA law has established a special system that ensures compensation of servicemen for life or health damages sustained during the RA defense, participation in military operations or combat alert on the frontline with the enemy or when performing special mission, also it has established a stamp fee which is a mandatory fee to be paid to the RA state budget in the amount and by the procedure prescribed by the same law for the purpose of ensuring compensation for fallen or damaged servicemen.

With respect to the stamp fee the following has been established:

- The stamp fee is mandatory for payment by:
 - RA resident individuals who work on the RA territory or outside the RA territory under the employment contract;
 - individuals not being RA residents who work on the RA territory under the employment contract;

- աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով ՀՀ տարածքում կամ ՀՀ տարածքից դուրս եկամուտ ստացող ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձինք,
 - աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով ՀՀ աղբյուրներից եկամուտ ստացող՝ ՀՀ ռեզիդենտ չհանդիսացող ֆիզիկական անձինք,
 - ՀՀ հաշվառված և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերը,
 - նոտարները:
- այն անձինք, որոնք չունեն տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար ստացման ենթակա հաշվեգրված եկամուտ դրոշմանիշային վճար չեն վճարում:
 - այն անձինք, որոնք աշխատում են միայն մեկ աշխատանքային պայմանագրով և այդ աշխատանքային պայմանագրով հարկերը և պարտադիր այլ վճարները (ներառյալ դրոշմանիշային վճարը) նվազեցնելուց հետո ստացվող աշխատավարձը չի գերազանցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը, դրոշմանիշային վճար չեն վճարում: Նշված անձանց փոխարեն դրոշմանիշային վճարները վճարվում են տվյալ անձանց աշխատավարձ վճարող գործատուի կողմից՝ նրա միջոցների հաշվին:
 - դրոշմանիշային վճարների չափը կազմում է 1000 դրամ:
 - ֆիզիկական անձանց համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային ամիսը:
 - դրոշմանիշային վճար վճարող անձինք, եթե եկամուտներ են ստանում հարկային գործակալից, ապա այդ անձինք դրոշմանիշային վճարը վճարում են բացառապես հարկային գործակալի միջոցով:
 - հարկային գործակալները յուրաքանչյուր ամիս՝ հիմք ընդունելով տվյալ ամսվա համար հարկային մարմիններ ներկայացված եկամտային հարկի և սոցիալական վճարի ամսական ամփոփ հաշվարկում ներառված այն վարձու աշխատողների թիվը, որոնց համար տվյալ ամսում հաշվեգրված են եկամուտներ, հաշվարկում են տվյալ ամսվա համար դրոշմանիշային վճարների չափը:
 - յուրաքանչյուր ամսվա համար հարկային գործակալները դրոշմանիշային վճարները պետական բյուջե (900005001186 - «Դրոշմանիշային վճարներ» գանձապետական հաշվեհամարին) են փոխանցում մինչև դրանց հաշվարկման ամսվան հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:
 - եթե նույն ֆիզիկական անձը միաժամանակ աշխատում է աշխատանքային պայմանագրով և հանդիսանում է անհատ ձեռնարկատեր, նոտար և (կամ) աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիաիրավական պայմանագրով ստանում է եկամուտ, ապա այդ ֆիզիկական անձն իրավունք ունի սահմանված կարգով և ժամկետներում դիմելու Հիմնադրամ՝
- RA resident individuals who receive income on the RA territory or outside the RA territory under civil contracts on performance of work or provision of services;
 - individuals not being RA residents who receive income from Armenian sources under civil contracts on performance of work or provision of services;
 - sole entrepreneurs registered and carrying business activities in the RA;
 - notaries.
- persons who do not have accrued income to be received for the given reporting period shall not pay the stamp fee.
 - persons who work only under one employment contract and their salary after deducting taxes and other mandatory payments (including the stamp fee) as required by this employment contract does not exceed the minimum salary established by the RA legislation shall not pay the fee. Instead of these persons, the stamp fee shall be paid by the employer who pays salary to them, at the expenses of its funds.
 - the stamp fee amounts to AMD 1000.
 - for individuals the reporting period is considered to be a calendar month.
 - in case individuals who pay the stamp fee receive income from tax agent, they shall pay the stamp fee only through the tax agent.
 - each month tax agents shall calculate the amount of the stamp fees for the given month based on the number of those hired employees included in the monthly summarized calculation of income tax and social payments submitted to the tax authorities for the given month, for whom income has been accrued for the given month.
 - for each month tax agents shall transfer the stamp fees to the state budget (treasury account - 900005001186 – “Stamp fees”) by the 20th (inclusive) of the month following the month of their calculation.
 - in case the same individual simultaneously works under an employment contract and is a sole entrepreneur, notary and (or) receives income under a civil law contract on performance of work or provision of services, this individual has a right to apply to the Fund by the established procedure and within defined timeframes in order to refund the stamp fee paid on more than one basis stated in this section.

մեկից ավելի հիմքով վճարված դրոշմանիշային վճարը հետ ստանալու համար:

Միաժամանակ, նշենք նաև, որ համապատասխան լրացում է կատարվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքում, որի համաձայն դրոշմանիշային վճարը սահմանվել է որպես ՀՀ պետական հարկ: *Այս օրենքի ընդունման կապակցությամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել նաև մի շարք այլ օրենքներում:*

13. Անվանումը **Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով արտոնություններ սահմանելու մասին**

Փաստաթուղթ ՀՀ օրենք
 Ամսաթիվը. 30 դեկտեմբերի 2016թ.
 Համարը. ՀՕ-257-Ն
 Հրատարակում. ՊՏ No. 95, 30 դեկտեմբերի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող օրվանից

Համառոտ նկարագիրը.

Այս օրենքով սահմանվել են հարկային որոշ արտոնություններ: Մասնավորապես, սահմանվել է, որ կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը ազատվում են ճշտված կամ առաջին անգամ ներկայացվող հաշվարկներով առաջացած հարկի լրացուցիչ գումարների նկատմամբ հաշվարկվող և վճարման ենթակա տույժերի և տուգանքների վճարումից, եթե`

- դրանք վերաբերում են մինչև 2016 թվականի սեպտեմբերի 30-ը ներառող հաշվետու ժամանակաշրջաններին
- այդ հաշվարկը ներկայացվում և հաշվարկված հարկերի գումարների վճարումը կատարվում է այս օրենքն ուժի մեջ մտնելուց հետո (31.12.16)` 90 աշխատանքային օրվա ընթացքում:

14. Անվանումը **«Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին**

Փաստաթուղթ ՀՀ օրենք
 Ամսաթիվը. 30 դեկտեմբերի 2016թ.
 Համարը. ՀՕ-262-Ն
 Հրատարակում. ՊՏ No. 95, 30 դեկտեմբերի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող տասներորդ օրը և կիրառվում է 2017թ. արտոնագրային վճար վճարող համարվելու ժամանակահատվածների նկատմամբ

Համառոտ նկարագիրը.

ՀՀ օրենքի այս փոփոխությամբ, սահմանվել է, որ «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի թիվ 1 հավելվածով (կոշիկի և կաշվե արտադրատեսակների նորոգում, գորգերի և գորգագործական արտադրատեսակների արտադրություն և նորոգում, լեզուների ուսուցման դասընթացներ և այլն) նախատեսված գործունեության տեսակները իրականացնող անհատ ձեռնարկատերերը և ֆիզիկական անձինք ազատվում են այդ գործունեության տեսակների մասով ՀՀ պետական բյուջե վճարման ենթակա հարկերից, բացառությամբ ՀՀ տարածք այդ անձանց կողմից ապրանքների ներմուծման համար մաքսային կամ հարկային մարմիններին վճարման ենթակա ավելացված արժեքի հարկից և ակցիզային հարկից:

At the same time it should be stated that relevant supplement has been made to the RA Law "On Taxes", according to which the above fee has been defined as the RA state tax.

By the adoption of this law, amendments and supplements have been also made to a number of other laws.

13. Title **On establishment of privileges for income controlled by the tax authorities**

Document: RA law
 Date: 30 December 2016
 Number: HO-257-N
 Publication: OJ No. 95, 30 December 2016
 Effective: From the day following the official publication

Abstract:

Certain tax privileges have been established by this law. Particularly, it was established that the entities and sole entrepreneurs are exempt from fines and penalties to be paid and calculated on additional tax amounts arising from adjusted tax calculations or tax calculations submitted for the first time, in case:

- they refer to the reporting periods that cover periods prior to 30 September 2016;
- the reports are submitted and the amounts of calculated taxes are paid within 90 working days after this law comes into force (31.12.2016).

14. Title **On making amendments to the RA Law "On Permission Fees"**

Document: RA law
 Date: 30 December 2016
 Number: HO-262-N
 Publication: OJ No. 95, 30 December 2016
 Effective: From the 10th day following the official publication and is applicable for the periods when being treated as a permission fee payer for 2017

Abstract:

In accordance with this amendment to the law, sole entrepreneurs and individuals engaged in the types of activities defined in appendix 1 to the RA Law "On Permission Fees (repair of footwear and leather articles, manufacturing and repair of carpets, language learning courses, etc.) are exempt from taxes to be paid to the RA state budget for these types of activities, except for VAT and excise tax payable to the customs and tax authorities for import of goods by these persons to the RA territory.

15. Անվանումը «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին

Փաստաթուղթ ՀՀ օրենք
 Ամսաթիվը. 30 դեկտեմբերի 2016թ.
 Համարը. ՀՕ-263-Ն
 Հրատարակում. ՊՏ No. 95, 30 դեկտեմբերի 2016թ.
 Ուժի մեջ է. 2017թ. հունվարի 1-ից

Համառոտ նկարագիրը.

2013, 2014, 2015 տարիներից յուրաքանչյուրում 10մլն. դրամից պակաս իրացումից հասույթ ունեցող հարկ վճարողների համար ցանցային կապի միջոցներով հսկիչ-դրամարկղային մեքենաների կողմից օրվա ընթացքում իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ հարկային մարմիններին տեղեկությունների ուղարկման պահանջի ժամկետը հետաձգվել է մինչև 2018թ. հունվարի 1-ը:

16. Անվանումը «Հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող նավթամթերքի տեղափոխման և պահպանման ժամանակ գոյացող փաստացի կորստի (բնական կորստի) չափերը հաստատելու մասին»

Փաստաթուղթ. ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի հրաման
 Ամսաթիվը. 30 նոյեմբերի 2016թ.
 Համարը. 1259-Ն
 Հրատարակում. ԳՏ No. 24, 9 դեկտեմբերի 2016թ.
 Ուժի մեջ է. Պաշտոնական հրատարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Համառոտ նկարագիրը.

Այս հրամանով սահմանվել է հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող նավթամթերքի տեղափոխման և պահպանման ժամանակ գոյացող փաստացի կորստի (բնական կորստի) չափերը:

17. Անվանումը «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին

Փաստաթուղթ ՀՀ օրենք
 Ամսաթիվը. 30 դեկտեմբերի 2016թ.
 Համարը. ՀՕ-264-Ն
 Հրատարակում. ՊՏ No. 95, 30 դեկտեմբերի 2016թ.
 Ուժի մեջ է. 2017թ. հունվարի 1-ից

Համառոտ նկարագիրը.

Օրենքի այս փոփոխությամբ ներդրվել է ակցիզային դրոշմանիշերը էլեկտրոնային եղանակով տրամադրելու կարգ, որը հնարավորություն կտա դրոշմանիշեր ստացած անձանց կողմից մինչև ակցիզային հարկով հարկման ենթակա ապրանքների իրացումը էլեկտրոնային եղանակով կատարել գրանցումներ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ էլեկտրոնային եղանակով կատարել ճշգրտումներ այդ գրանցումներում:

2017թ. հունվարի 1-ից բարձրացվել են նաև որոշ ապրանքների համար ակցիզային հարկի դրույթաչափերը, որը պայմանավորված է ԵՏՄ անդամակցությամբ (ՀՀ հարկային օրենսգրքի 445-րդ հոդված):

Հարկային օրենսդրության 2017թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած փոփոխությունները, որոնք կատարվել են Հարկային Օրենսգրքի համաձայն կներկայացվեն առանձին համարում

15. Title On making amendment to the RA Law “On application of cash register machines”

Document: RA law
 Date: 30 December 2016
 Number: HO-263-N
 Publication: OJ No. 95, 30 December 2016
 Effective: From 1 January 2017

Abstract:

The deadline for sending to the tax authorities by means of network communication the information on total amount of cash settlements made during the day through cash registers for the taxpayers with sales revenue of less than AMD 10 million in each of 2013, 2014 and 2015 has been postponed to 1 January 2018.

16. Title On amounts of actual loss (natural loss) incurred during transportation and storage of oil products deducted from gross income for taxation purposes

Document: Order of the RA Minister of Economic Development and Investments
 Date: 30 November 2016
 Number: 1259-N
 Publication: DJ No. 24, 9 December 2016
 Effective: From the 10th day following the official publication

Abstract:

By this order amounts of actual loss (natural loss) incurred during transportation and storage of oil products deducted from gross income for taxation purposes have been established.

17. Title On making supplements and amendments to the RA Law “On Excise Tax”

Document: RA law
 Date: 30 December 2016
 Number: HO-264-N
 Publication: OJ No. 95, 30 December 2016
 Effective: From 1 January 2017

Abstract:

By this amendment the procedure of electronic provision of excise stamps has been established, which will allow the persons who have received stamps to make electronic records before sale of goods taxed by excise tax and to adjust that records in electronic form in case of necessity.

From 1 January 2017 excise tax rates for certain goods have been increased, which is conditioned by the EAEU membership (article 445 of the RA Tax Code).

Tax legislation changes effective from 1 January 2017, which have been made in accordance with the Tax Code, will be presented in a separate publication

Contact us

KPMG Armenia cjsc

8th floor, Erebuni Plaza Business Center,

26/1 Vazgen Sargsyan Street,

Yerevan, 0010, Armenia

Tel/Fax: +374(10) 566 762

E-mail: general@kpmg.co.am

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ

Վազգեն Սարգսյանի փ. 26/1,

«Էրեբունի Պլազա» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ

Երևան, 0010, Հայաստան

Հեռ/ֆաքս: +374(10) 566 762

Էլ-փոստ : general@kpmg.co.am

The information contained herein is of a general nature and is not intended to address the circumstances of any particular individual or entity. Although we endeavour to provide accurate and timely information, there can be no guarantee that such information is accurate as of the date it is received or that it will continue to be accurate in the future. No one should act on such information without appropriate professional advice after a thorough examination of the particular situation.

© 2017 KPMG Armenia cjsc, a company incorporated under the Laws of the Republic of Armenia, a member firm of the KPMG network of independent member firms affiliated with KPMG International Cooperative ("KPMG International"), a Swiss entity. All rights reserved.

The KPMG name and logo are registered trademarks or trademarks of KPMG International.

Սույնով ներկայացված տեղեկատվությունը ընդհանուր բնույթ է կրում և նպատակատղիված չէ որևէ հատուկ անձի կամ ընկերությունում առկա հանգամանքներին: Մենք փորձում ենք ճշգրիտ տեղեկատվություն տրամադրել ճիշտ ժամանակին, այնուամենայնիվ, որևէ երաշխիք չի կարող լինել այն մասին, որ այդ տեղեկատվությունը ճշգրիտ կլինի դրա ստացման ամսաթվի դրությամբ, կամ որ այն կշարունակի ճշգրիտ լինել ապագայում: Ոչ ոք չպետք է այդ տեղեկատվության հիման վրա որևէ գործողություն կատարի՝ առանց համապատասխան մասնագիտական խորհրդատվություն ստանալու տվյալ մասնավոր իրադրության խորը ուսումնասիրությունից հետո:

© 2017 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված ընկերություն, շվեյցարական KPMG International Cooperative ("KPMG International") կազմակերպության անդամակցող ՏՔԷ-ՓԻ-ԷՄ-ՋԻ՝ անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

KPMG անվանումը և KPMG լոգոտիպը KPMG International կազմակերպության գրանցված ապրանքային նշաններն են: